

U22

1690

= 80 =

516

Թ Ե Զ Ի Ս Ն Ե Բ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐ

ՉԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ԳՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՏԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սոցիալիստական կառուցումը դնում է ամենազգալի ինդիկատորները ԽՍՀՄ-ի աշխատավորության առաջ: Վերջինից իսկապես կապիտալիստական Արևմուտքից անկախ լինել, պետք է ԽՍՀՄ-ն ազդարարային հետամնաց յերկրից վերածել առաջնակարգ արդյունաբերական յերկրի: Անհրաժեշտ է վերասարքավորել գյուղատնտեսական ֆարրիկաները և դործարանները, կառուցել նորերը, վերակառուցել արագ, հաղթական տեմպով «Նեպոլյան Ռուսաստանը վերածվի սոցիալիստական Ռուսաստանի» ինչպես ասում էր Վ. Ի. Լենինը:

Մեր առաջ դրված է գյուղատնտեսության վերակառուցման, գյուղատնտեսության տրաքտորիզացիայի, մաշինիզացիայի, մեքենայացման բերքատվությունը անհապաղ բարձրացման հսկայական աշխատանք:

Քիչ միջոցներ չեն պահանջվի պրոլետարներից արդյունաբերության համար վերակառուցելու աշխատավորներ պատրաստելու համար:

Կուլտուրական հեղափոխության լուրջը նշանակում է մեր ամբողջ կենցաղի վերակառուցումը: Գյուղացիները, հիվանդանոցները, կուլտուրական տները, բանվորական մամուլը, բանվորական թատրոնը, ռադիոն և այլն, այս բոլորն անհրաժեշտ է կառուցել մեծ չափերով: Այս րոյունը քրեքերը լուծելու համար պրոլետարական պետությունը, հասկանալի չէ, վոր իր տրամադրությունների ատկ պետք է գրամական խոչոր միջոցներ ունենա:



1690-492



2. ՎՈՐՏԵՂԻՑ ԿԱՐՈՂ Ե ՍՏԱՆԱԼ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒ- ՅՅՈՒՆՆ ԻՐԵՆ ՆԱՐԿԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը չի կարող ստանալ արտաքին փոխառութիւն կապիտալիստական պետութիւններից և այլերկրյա կապիտալիստներից տնտեսական կախվածութեան գնով: Մենք ստիպված ենք փնտոել ուրիշ ճանապարհներ և միջոցներ սոցիալիստական կառուցման համար առանց ոտարյերկրյա կապիտալի ոգնութեան: Այդ ուղիներն ընկած են հենց նույն ԽՍՀՄ-ում և գտնվում են աշխատավորութեան ձեռքին: Սոցիալիստական շինարարութեան հերթական ամենակարևորագույն խնդիրները լուծելու համար, մեր պետութիւնն իր միջոցները կարգավորում է հետևյալ աղբուրներից՝ 1) հարկեր, յեկամուտներ ընդերքից (քարածուխ, նավթ, թանկարժեք մետաղներ և այլն), անտառներից տրանսպորտից և այլն մուտքեր, վորոնք անցնում են պետական բյուջեյով: 2) պետական արդյունաբերութիւնից և առևտրից ստացված շահույթները, 3) ընակչութեան դրամական միջոցները (խնայողութիւնները և ժամանակավորապես ազատ դրամները) վորոնք փոխ են տրվում պետութեանը, կամ գրվում խնայողական դրամարկղներում:

Միայն թված բոլոր աղբուրները լրիվ ոգտագործելու պայմաններում կարող ենք հույս դնել մեր ժողովրդական տնտեսութեան հաջող զարգացման վրա: Հատկապես մեծ նշանակութիւն ունի պետական աշխատավորական խնայողական դրամարկղների գործունեութեան ուժեղացումը, վորովհետև նրանք զնում են պետութեան տրամադրութեան տակ մեծ համարով միջոցներ շինարարութեան կարիքների համար:

Պետք է ասել, վոր ժամանակավորապես ազատ միջոցները և ընակչութեան դրամական խնայողութիւնները յուրաքանչյուր տվյալ ժամանակաշրջանում ամբողջն ի մի դումարած կազմում են բախվածին մեծ դումար, վորովհետև վերջին տարիներս մեր տնտեսութեան անման հետևանքով բարձրացել է աշխատավորութեան նյութական բարորութիւնը, իսկ աշխատավորների, բանվորների և գյուղացիների քանակը հազվում են տասնյակ միլիոններով:

Միայն հարկավոր է, վորպեսզի այդ ժամանակավորապես ազատ միջոցները և խնայողութիւնները ներդրվելին ոգտակար պետական շրջանառութեան մեջ, փոխ տրվելին պետութեանը արտադրական նպատակների համար: Դրան հասնել կարելի չէ, առհենից առաջ պահ տալով ինչ-ինչ պատճառներով ազատ մնացած

ամենափոքր դրամական դումարները, թեկուզ կարճ ժամանակով, պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին: Թե վորքան այդ ժամանակավորապես ազատ միջոցները ներկայացնում են իրենցից բախվածին պատկանելի դումար, այդ յերևում է նրանից, վոր նույնիսկ այժմ, յերբ բանվորների և գյուղացիների ամենափոքր մասն է ոգտվում խնայողական դրամարկղներից, Միութեան բոլոր խնայողական դրամարկղների հաշիվներում ազատ մնացողը, վորը կազմված է մանր աշխատավորական խնայողութիւններից արդեն 350 միլիոն ո. անց է: Այդպիսի դումարը կարող է փոխարինել այլերկրյա մի մեծ փոխառութեան: Այս միջոցները կարող են զգալիորեն մեծանալ, յեթե աշխատավորութեան ճնշող մեծամասնութիւնը զա այն մտքին, վոր անհրաժեշտ է ոգտակար է իր բոլոր ազատ միջոցները պահ տալ խնայողական դրամարկղներին և վոր թե պահել տանը, ևս առավել, վոր խնայողական դրամարկղների համապետական նշանակութեան հետ միասին այդ նույն դրամարկղների ոգտագործելն ամեն մի աշխատավորին տալիս է մեծ ոգուտներ և առավելութիւններ:

3. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՈԳՏԱԿԱՐ ՆՇԱՆԱԿՈՒ- ՅՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՆՎՈՐԻ ՆԱՍԱՐ

Խնայողական դրամարկղն ամենալավ միջոցն է աշխատավորութեան անձնական բյուջեն ոպցիոնալացնելու և կարգավորելու համար մղվող պայքարում:

Ոգտվելով խնայողական դրամարկղի ծառայութիւններից, բանվորն ընտելանում է իր աշխատավարձը ծախսելու մեջ պլանաչափութիւն, խնայողութիւն և համաչափութիւն մտցնելուն, խուսափելով ավելորդ և վոր արտադրողական ծախսերից:

Խնայողական դրամարկղը՝ խելացի խնայողութեան, աշխատավորական եկոնոմիայի և աշխատանքով վաստակած ոուբլիները նպատակահարմար ոգտագործելու դպրոցն է: Միանգամայն սխալ է և ամբողջովին կեղծ դատողութիւն այն մասին, թե խնայողութիւնը դձուութեան, քաղքենիութեան և ժխտութեան նշան է: Ընդհակառակն, խնայողական և տնտեսող վերաբերմունքը դեպի աշխատանքով վաստակած ոուբլին, նրա արժեքը զիտակցելը և պրոլետարական պետութեան փոխ տալը, զիտակցութեան և քաղաքացիութեան արտահայտութիւն է: Թեթև, անփույթ և շտալ վերաբերմունքը դեպի փողը խորթ է պրոլետարիատին և հատուկ միայն բուրժուա-աղնվական դասակարգերին:

Մնայողական դրամարկղը՝ մինչ այժմ պահպանված բանվորական կենցաղի խավար կողմերի թշնամին և, այն և՛ հարբեցողության, թղթախաղության և այլ վոչ արտադրողական ծախքերի: Ժամանակավորապես-ազատ իր փողերը պահ տարով խնայողական դրամարկղին, բանվորը պահպանում է իր միջոցները կամաց-կամաց փոշիանալուց և ոգնում է իրեն անհրաժեշտ դումար հավաքելու իր տնտեսական-կենցաղային պահանջները բավարարելու համար (հագուստի, կարանիքի, արձակուրդի, կուրորտ գնալու, և այլն): Մնայողական դրամարկղին փող պահ տարու ճանապարհով բանվորը մտցնում է խնայողություն իր բյուջեյի մեջ և վերջինիս մեջ ավելի շատ տեղ է թողնում կուրորտական ծախքերի համար (թատրոն, գրքեր, ոստիկ, շրջագայություն և այլն) և դրանով բարձրացնում իր կուլտուրականությունը: Մնայողական դրամարկղները բանվոր ավանդատուի միջոցների խիստ հաջիվ են պահում և սրանով ոգնում բանվորին պլանավորել իր միջոցները:

4. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՈՐՈՒՏՆԵՐԸ ՅԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մնայողական դրամարկղներում պահ աված դումարները բերում են շահույթ, տոկոսներ՝ 8%, յեթև փողը ներդրված է առանց ժամակետի անորոշ ժամանակով և 9%, յեթև ավանդը մուծված է վորոշյալ ժամանակով, վորից առաջ չի կարող ստացվել (որինակ 3 ամսով, 1/2 տարով և այլն):

2. Ավանդները մնում են խնայողական դրամարկղներում ապահով և սրանց ամբողջության համար պատասխանատու յե Սորհրդային կառավարությունը: Մնայողական դրամարկղից արված գրքույր կորչելու կամ փչանալու դեպքում, ավանդատուն այս մասին պիտի հայտնե խնայողական դրամարկղին և նրան արվում է նորը (դուրբիկատ) իսկ կորցրած գրքույրով վոչ վոք չի կարող փողն ստանալ: Ամեն մի բանվոր պահպանում է իր փողերը զանազան պատահականություններից, (հրդեհ, կողոպուտ, թալան և այլն) յերբ պահ է տալիս փողերը խնայողական դրամարկղին:

Ավանդատուններն իրենց փողերը խնայողական դրամարկղից ստանում են ըստ առաջին իսկ պահանջի լրիվ կամ մաս-մաս:

3. Մնայողական դրամարկղին պահ արված ավանդներն անձեռնամխելի յեն: Բացի ավանդատուից և նրա որինական հավատարմատարից ուրիշ վոչ վոք չի կարող փողն ստանալ խնայողական դրամարկղի գրքույրով: Մնայողական դրամարկղի ավանդը չի կա-

րող կալանքի տակ առնվել, յի բաց առյալ այն դեպքից, յերբ ավանդատուն հանցանք է գործել, վորի համար նրան տալիս են քրեական դատի:

4. Ավանդատունների ազանունները և ավանդների չափը խիստ զաղտնի յեն պահվում: Մնայողական դրամարկղի աշխատակիցները պարտավոր են պահել ավանդատունների դաղտնիքը, սալա թե վոչ քրեական պատասխանատվության կկանչվեն (121 հոդ. Գրեական Որենսդրքի):

5. Մնայողական դրամարկղի ավանդներն ազատ են պետական և տեղական ամեն տեսակի հարկերից և տուրքերից:

6. Ավանդատուն խնայողական դրամարկղների միջոցով կարող է ողտվել զանազան ծառայություններից, վորոնք գործնական կյանքում մեծ նշանակություն ունեն. ա) խնայողական դրամարկղներն ընդունում և պահում են անվճար պետական փոխառությունների որլիդացիաները, հետևում են խաղարկություններին, կուպոնների վճարման յթե յերբ և որլիդացիան տիրափ մեջ մտնում և այլն: Մնայողական դրամարկղները վաճառում են պետիոխառությունների որլիդացիաները, սրանով փոխատվություն են տալիս և վճարում են շահույթները. բ) խնայողական դրամարկղները փող են փոխադրում (ուղարկում) ԽՍՀՄ բոլոր վայրերը և փոխադրությունները մինչև 100 ուրբլի կատարվում են անվճար. գ) խնայողական դրամարկղին կարելի յե վճարել դյուզարկը, խնայելով ժամանակը և ազատվելով ավելորդ հոգսերից. բացի այդ, խնայողական դրամարկղին պահ արված դումարի վրա, մինչև հարկը վճարելը, տոկոսներ են դալիս. դ) վորպեսզի հետը փող չտանել ճանապարհին, արձակուրդ գնալիս, գործուղվելիս, հանգստյան տուն, կուրորտ գնալիս և այլն և այդպիսով փողը չենթարկել կորստի, գողանալու վտանգի և ուրիշ դժբախտ պատահարների, կարելի յե փողը մուծել խնայողական դրամարկղ և այնտեղից ստանալ ձրի տակիքեղխով (վկայական), վորով կարելի յե մուծած փողը հետ ստանալ ամբողջությամբ կամ մաս-մաս Միության ուղած գրամարկղից: Ակկրեդիտիվը կորցնելու կամ գողացվելու դեպքում վոչ վոք չի կարող փողն ստանալ, բացի մուծողից. ե) խնայողական դրամարկղի միջոցով կարելի յե վճարել կոմմունալ (ջրի, գազի, էլեքտրականության համար և այլն) սպասարկության համար: Մնայողական դրամարկղի ավանդատունները խնայողական դրամարկղի միջոցով ստանում են ձրի իրավաբանական ոգնություն յսորհրդային իրավունքի բոլոր հարցերի վերաբերյալ:

7. Պետք է ընդգծել և խնայողական դրամարկղների միջոցով արժեքավոր թղթեր՝ պետաշխնայողական դրամարկղների սերտիֆիկատներ (վկայականներ) ձեռք բերել:

Սերտիֆիկատները բաց են թողնվում 5 և 10 ուրբու արժույթյամբ և շատ ձեռնտու յե նրանց միջոցով խնայողութուն կատարել: Սերտիֆիկատները տարեկան բերում են միջին հաշվով 12% և 6 տարի անցնելուց հետո նրանց արժեքը կրկնապատկվում է: Յուրաքանչյուր կիսամյակի տոկոսները միանում են սերտիֆիկատի արժեքին, վորից հետո արդեն տոկոսներ բերում է աճած ամբողջ դումարը: Սերտիֆիկատի արժեքն անընդհատ աճում է: Նրանք դնվում և ծախվում են խնայողական դրամարկղներում և դանձարանների բաժանմունքներում: Սերտաֆիկատները լինում են անվանական և կրողի (на предъявителя): Անվանական սերտիֆիկատը կորչելու դեպքում տրվում է դուբլիկատ: Խնայողական դրամարկղներն ընդունում են սերտիֆիկատներ և պահում ձրի:

8. Խնայողական դրամարկղներին ավանդները պահ են տրվում անվանական և կրոսի (на предъявителя): Առաջին դեպքում փողը տրվում է միայն այն անձին, վորի անունով փողը մուծվել է, կամ թե նրա հավատարմագրով ուրիշ անձի: կրողի գրքույկներով փողն ստանում է յուրաքանչյուր վոք, ում վոր ավանդատուն հանձնել է գրքույկը: Այդ պատճառով կրողի գրքույկը պետք է շատ զգուշ պահել: Ավանդները լինում են վորոշված ժամկետով (որինակ 3 ամիս, 6 ամիս և այլն) և անորոշ: Բացի այդ, փողը կարելի յե պահ տալ նաև ընթացիկ հաշվով: սա նրանով է հարմար, վոր ավանդատվի դրած չեկերով ամեն վոք կարող է փողն ստանալ: Խնայողական դրամարկղի ավանդատուն իրավունք ունի, առանց ձեականութունների, գրքույկի վրա հասարակ մակագրութուն անելով կտակել իր ավանդը ցանկացած մարդուն:

5. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մենք թվարկեցինք այն բոլոր ոգուտները, արտոնութունները և առավելութունները, վորոնք տրվում են խնայողական դրամարկղների կողմից իր ավանդատուներին: Բայց դործը սրանով չի սահմանափակվում: Խնայողական դրամարկղներն ունին բացառիկ կարևոր համապետական նշանակութուն, վորովհետև նրանք հավաքում են ամբողջ Միության մեջ աշխատավորության ժամանակավորապես ազատ միջոցները, վորոնք գտնվում են ժողովրդական

տնտեսության մեջ շրջանառութունից դուրս և տալիս են պետության ոգտագործելու, վորն ուղղում է այս միջոցները խնդուստրացման տեմպն ուժեղացնելու, Փարբիկաներ և գործարաններ սարքավորելու և կառուցելու, տրանսպորտը զարգացնելու, մեծ ելեքտրոկայաններ կառուցելու, գյուղատնտեսութունը կատարելագործելու, բարելավելու և այլն: Մանր, ցրված դրամները և խնայողութուններն ապարատի միջոցով դառնում են ժողովրդական տնտեսության զարգացման հզոր գործոն (фактор) . խնայողական դրամարկղների հավաքած փողերը, մտնելով ժողովրդական տնտեսության շրջանառության մեջ, նվազեցնում են նոր փող բաց թողնելու պահանջը, կայունացնում են խորհրդային ուրբին, նպաստում են արդյունարելության և գյուղատնտեսության զարգացմանը, եժանացնում են ապրանքների գները և բարելավում են աշխատավորության ընդհանուր տնտեսական դրութունը:

Խնայողական դրամարկղին ավտոդատու դառնալով, յուրաքանչյուր մարդ ոգնում է իրեն բարելավելու իր գրութունը և սրա հետ միասին դառնում է մեծ սոցիալիստական կառուցման գիտակից մասնակցող:

Բոլոր սրբլետարներ, դեպի խնայողական դրամարկղների ավանդատուների շարքերը:

Խնայողական գրքույկը՝ խորհրդային շինարարության մասնակցելու վկայականն է:

Մտցնենք աշխատավորության կենցաղի մեջ խնայողական դրամարկղը:



1928թ.

ՀԱՅԳՈՒԻԳՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպլար 1471 բ.

Պատ. 2128

Տիրաժ. 3000

ՀՀ Ազգային գրադարան



NL0945432

1292

1690

1264